ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/3.2-3-25
ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. մարտի 25-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 2 (երկու) հայտ՝

- «ԳՐԻՒՆ ՌՈՔ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի,

• «ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 1 (մեկ) կազմակերպության՝

• «ԳՐԻԻՆ ՌՈՔ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝

• **«ԳՐԻԻՆ ՌՈՔ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում՝

հրավերի 2.4 կետի.

- 1-ին ենթակետով պահանջված կանոնադրությունը (վերջին խմբագրությամբ) ներկայացված չէ,
- 9-րդ ենթակետով սահմանված տեղական ինքնակառավարման մարմնի կողմից միջոցառման անցկացման համաձայնության վերաբերյալ տեղեկանքը կցված չէ,
- 5-րդ և 7-րդ ենթակետերով պահանջված փաստաթղթերը՝ պորտֆոլիոն և ինքնակենսագրականները, ստորագրված, կնքված կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ չեն ներկայացված:

Մեկի՝

• **«ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին, սակայն Հանձնաժողովը առաջարկում է կազմակերպությանը՝

- ներկայացնել պորտֆոլիոյի ստորագրված, կնքված կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ տարբերակը,
- կազմակերպության կողմից ներկայացված ֆինանսական նախահաշվում հստակեցնել մի շարք կետերի տարբերությունը կամ ներկայացնել դրանց բացվածքը, օրինակ՝ 2.1-2.3-րդ, 2.16-րդ, 2.30-2.31-րդ կետեր, և անհրաժեշտության դեպքում վերախմբագրել ֆինանսական նախահաշիվը:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 1 (մեկ) կազմակերպության՝

• **«ԳՐԻԻՆ ՌՈՔ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը:

2. **Հաղթող ճանաչել** Ծրագրի հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպության՝

• **«ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը:

3. **Առաջարկել՝** Ծրագրի հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհային մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված **«ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ին** շտկել իր կողմից ներկայացված հայտում առկա տեխնիկական խնդիրները, մասնավորապես՝

- ներկայացնել պորտֆոլիոյի ստորագրված, կնքված կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ տարբերակը,
- կազմակերպության կողմից ներկայացված ֆինանսական նախահաշվում հստակեցնել մի շարք կետերի տարբերությունը կամ ներկայացնել դրանց բացվածքը, օրինակ՝ 2.1-2.3-րդ, 2.16-րդ, 2.30-2.31-րդ կետեր, և անհրաժեշտության դեպքում վերախմբագրել ֆինանսական նախահաշիվը:

4. Առաջարկը ընդունելու դեպքում շտկել առաջարկված տեխնիկական խնդիրները, ինչպես նաև Ծրագրի ֆինանսական նախահաշիվը և մրցութային հանձնաժողովին՝ **մինչև 2025 թվականի ապրիլի 3-ը,** ներկայացնել շտկված տարբերակը:

5. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Զ.Հայրապետյան - _____

Լ.Բասմաչյան - _____

Շ.Հովսեփյան - _____